



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ  
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ N 7

Հեռ. 060650035

Կայք [gegharkunik.mta.am](http://gegharkunik.mta.am)

Էլ. փոստ [gegharkunik@mta.gov.am](mailto:gegharkunik@mta.gov.am)

N \_\_\_\_\_

-----2019թ.

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏՆՕՐԵՆ  
ԳԵՆՅԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

**Հարգելի՛ տիկին Պետրոսյան**

Ի պատասխան Ձեր 2019 թվականի նոյեմբերի 30-ի հարցմանը /մտից Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան Մ-16199-2019 04.12.2019թ./ տեղեկացնում եմ՝

Ձեր հարցման 1-ից 6-րդ կետերի վերաբերյալ տեղեկատվությունը Ձեզ կտրամադրվի 30-օրյա ժամկետում.

7. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի տարեկան բյուջեն հրապարակվում է աղյուսակի ձևով և 2014 – 2019 թվականների բյուջեները տեղադրված են Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայքում /լինկ – [gegharkunik.mtad.am /budget/](http://gegharkunik.mtad.am/budget/).

8. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի բյուջեի կատարողականը հրապարակվում է և 2014-2018 թվականների բյուջեների կատարողականները տեղադրված են Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայքում /լինկ – [gegharkunik.mtad.am/ byudje/](http://gegharkunik.mtad.am/byudje/).

9. 2017-2019 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կողմից երեք հարցում է մերժվել՝ չի տրամադրվել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանում և նրա համակարգում գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը, քանի որ այն հաստատվել է «Գաղտնի» դրոշմագրով.

10. 2017-2019 թվականներին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան ստացված հարցումների 7 տոկոսը պատասխանվել է 30-օրյա ժամկետում, իսկ 1-ը դրանից ուշ.

11. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանը անձանց, այդ թվում հաշմանդամություն ունեցող անձանց տեղեկատվությունը տրամադրում է թղթային տարբերակով «Հայփոստ» ծառայության միջոցով կամ էլեկտրոնային տարբերակով էլեկտրոնային հասցեների միջոցով:

Հարգանքներով՝



Недействительная подпись

X

---

ՍԵՎԱԿ ԽԼԴԱԹՅԱՆ

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

ՍԵՎԱԿ ԽԼԴԱԹՅԱՆ

Քարտուղարություն  
Վ. Ղուկասյան  
60650624